# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

## ԿՐԹՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՅԼ ԱՂՕԹՔ

'Ի ՊԷՏՍ ՄԱՆԿԱՆՑ

## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ։



'Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆ. ՏՆ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ԽԱՉԱՏՐՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՍՐԲՈՑ ԱՄԵՆԱՓՐԿՉԻ ՎԱՆԱՑՆ ՋՈՒՂԱՅՈՒ։

*'Ի Տպարանի Եպիսկոպոսական Ճեմարանին։*

'Ի ԿԱԼԿԱԹԱ

1841.—ՌՄՂ.

1999
ԳՐԱԴԱՐԱՆ



VICTORIA

Վ,ԻԿՏՈՐԻԱ

Լեո
2244
ԼԷՕԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՄՐԲԱԶԱՆ

# ՏԵԱՌՆ ՊՕՂՈՍԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

# ԿԱՐՆԵՑԻՈՅ

ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՆՈՒԻՐԱԿԻ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ

'Ի ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ ԷՋՄԻԱԾՆԻ

ԸՆԾԱՅԷ ԶԱՅՍ

ԻԲՐԵՒ ԶՆՈՒԷՐ ԻՄՆ ՍԻՐՈՅ

ԵՒ ՅԱՐԳԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

ՆՈՒԱՍՏ ԵՒ ԱՆՊԻՏԱՆ ԾԱՌԱՅ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՎԴԱԼԵԱՆՑ՝

ՎԱՐԺԱՊԵՏ 'Ի ՀԱՅԿԵԱՆ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ

'Ի ԿԱԼԿԱԹԱ

43921-

ԹԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
Арм.ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

28062-62

(2244-

2247

ԼԵՕ
ԳՐԱԴԱՐԱՆ

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ։

## Մասն Առաջին։

Հարց. Դու քրիստոնեա՞յ ես։

Պատ. Այո՛ քրիստոնեայ եմ շնորհօքն Քսի։

Հ. Զի՞նչ է նշանն քրիստոնէից։

Պ. Սուրբ և պատուական խաչն Քսի։

Հ. Խաչակնքեա՛ զի տեսից Թէ ո՞րպէս խաչակնքես։

Պ. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Հ. Ո՞վ ստեղծ զքեզ։

Պ. Աստուած ամենակարող։

Հ. Վասն է՞ր ստեղծ։

Պ. Վասն այն՝ զի զինքն ճանաչեցեմ և զկամքն կատարեցեմ, և վերջապէս արքայութեանն արժանաւորեցիմ։

Հ. Զի՞նչ է Աստուած։

Պ. Է՛ ստեղծօղ երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։

Հ. Աստուած քանի՞ է։

Պ. Մի է։

Հ. Աստուածային անձինք քանի՞ք են։

Պ. Երեք են։

Հ. Երեք անձանց անուանքն զի՞նչ են։

Պ. Միոյն անունն՝ Հայր է, երկրորդին՝ Որդի է, և երրորդին՝ Հոգի Սուրբ։

Հ. Ուրեմն Հայր Աստուած է՞։

Պ. Այո՛ Աստուած է։

Հ. Որդին Աստուած է՞։

Պ. Այո՛ Աստուած է։

Հ. Հոգին Սուրբ Աստուած է՞։

Պ. Այո՛ Աստուած է։

Հ. Ապա ուրեմն երեք աստուածք ե՞ն։

Պ. Ո՛չ երեք աստուածք, այլ մի Աստուած և երեք անձինք։

## Մասն Երկրորդ։

Հ. Յայս յերից անձանց ո՞ր անձն մարդացաւ։

Պ. Միայն որդւոյ անձն մարդացաւ։

Հ. Մարդացաւ ասելն զի՞նչ ասել է։

Պ. Մեզ նման կատարեալ մարդ եղև առեալ է՝ մարմին առնլոջն 'ի մաքուր յարենէն կուսին Մարիամու։

Հ. Մարմինն առնողն ո՞վ է։

Պ. Բանն Աստուած, որ է միածին որդին։

Հ, Յորո՞ւմ աւուր էառ զմարմինն։

Պ. 'Ի յեօթն ապրիլի ամսոյն՝ որ է օր աւետման։

Հ. Զի՞նչ է առեալն։

Պ. Հոգի, միտք և մարմին՝ որք են մարդկայինք։

Հ. Զիա՞րդ առօղն և առեալն լինին մի անձն և մի բնութիւն։

Պ. Քանզի բանն Աստուած այնպէս միաւորեաց ընդ անձին և բնութեան իւրում զմարդկութիւն, որպէս մարմին մեր միաւորեալ է ընդ հոգւոյ մերում, և մի բնութիւն եղեալ է ընդ նմա՝ առանց շփոթման։ Այնպէս և մարդկութիւն միաւորեցաւ ընդ անձին և ընդ բնութեան բանին այ, և մի Աստուածամարդկային բնութիւն եղև ընդ նմա առանց շփոթման և առանց փոփոխման, որպէս վկայեն Սուրբ Հարքն Աթանաս, Կիւրեղ և այլք։

Հ. Ծնաւ ասելն զի՞նչ ասել է։

Պ. Փրկիչ ասել է. զի փրկեաց զմեզ 'ի ձեռաց սատանայի և 'ի տանջանաց դժոխոց:

Հ. Քրիստոս անունն զի՞նչ անուն է:

Պ. Օծեալ ասել է, վասն զի բանն Աստուած մարդացեալ օծեցաւ 'ի Հօրէն այ՝ Հոգւով սրբով, որպէս Պետրոս Առաքեալն ուսուցանէ. Գործ. Ժ. 38:

Հ. Տէր մեր Յիսուս Քրիստոս յո՞րում աւուր ծնաւ:

Պ. 'Ի վեցում աւուրն Յունվարի ամսոյն:

Հ. Ո՞ւր ծնաւ:

Պ. 'Ի Բեթղեհէմ քաղաքի, 'ի մսուրն անբանից:

Հ. Յումմէ՞ ծնաւ:

Պ. 'Ի կուսէն Մարիամու, որպէս 'ի վերոյ ասացաւ:

Հ. Մարիամ Աստուածածինն կոյս մնա՞ց յետ ծնանելոյն:

Պ. Այո՛, վասն զի անսերմն յղացաւ, և անապականաբար ծնաւ, վասն որոյ յետ ծնանելոյն կոյս մնաց:

Հ. Քրիստոս ըստ Աստուածութեանն ծնեա՞լ էր 'ի հօրէ:

Պ. Այո՛ ծնեալ էր:

Հ. Ըստ մարդկութեանն ծնա՞ւ 'ի մօրէ:

Պ. Այո՛ ծնաւ:

Հ. Առաջին ծնունդն ո՞րպէս էր:

Պ. Անժամանակ և անմարմին ծնունդ առանց մօր:

Հ. Երկրորդ ծնունդն ո՞րպէս էր:

Պ. Ժամանակեայ և մարմնով ծնունդ առանց հօր:

Հ. Քանի՞ ամաց էր Քրիստոս, յորժամ էկն 'ի մկրտութիւն:

Պ. Երեսնամեայ էր ըստ վկայութեան Ղուկասու Աւետարանչին:

Հ. Յո՞րում ամսոյ մկրտեցաւ:

Պ. 'Ի վեցն Յունվարի ամսոյն, յորում աւուր ծնեալ էր 'ի կուսէն ծնաւ մկրտութեամբ և 'ի Յորդանանէ յօրինակ մեզ. և զի երկոքին ծնունդք են, թէպէտ և զանազանեալք են 'ի միմեանց խորհրդեամբ և ժամանակաւ, որպէս վկայեն բազում սուրբ Հարք, մանաւանդ Սուրբն Ներսէս Շնորհալի Հայրապետն մեր կլայեցի:

Հ. Յումմէ՞ մկրտեցաւ Քրիստոս:

Պ. 'Ի Յովհաննէ որդւոյն Զաքարիայի և Եղիսաբեթի

Հ. Ո՞ւր մկրտեցաւ:

Պ. 'Ի գետն Յորդանան:

Հ. Զի՞նչ տեսանելի եղեւ անդ:

Պ. Հայրն ամենակալ ձայնիւն, և Հոգին սուրբ իջմամբն յայտնեցին զՔրիստոսի Աստուածութիւնն: Վասն որոյ օր ծննդեան կոչի և օր յայտնութեան:

Հ. Քրիստոս քանի ամբ՞ շրջագայեցաւ 'ի վերայ երկրի:

Պ. Երեսուն և երեք տարի և կէս:

Հ. Այնտեղ ժամանակ զի՞նչ արար:

Պ. Ուսոյց հետևողաց իւրոց զճանապարհ ճշմարտութեան:

Հ. Յետ այնքան ժամանակի հրապարակաւն զի՞նչ արար:

Պ. Եկն կամաւ 'ի չարչարանս, խաչեցաւ և մեռաւ վասն մեր ըստ առաքելոյն, թէ Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց, և այլն:

Հ. Ո՞ւր խաչեցաւ և մեռաւ:

Պ. 'Ի լեառն Գողգոթա, մերձ 'ի քաղաքն Երուսաղէմ:

Հ. Ընդէ՞ր մեռաւ:

Պ. Վասն փրկութեան մերոյ:

Հ. Յորո՞յ վերայ մեռաւ:

Պ. 'Ի վերայ խաչափայտին:

Հ. Եթէ Քրիստոս Աստուած էր, զի՞արդ մեռաւ:

Պ. Ոչ ասեմ թէ աստուածային բնութեամբն մեռաւ, այլ առեցեալ մարմնովն. այսինքն՝ անճառելի միաւորութեամբն. վասն որոյ և ասի Աստուած խաչեցաւ և մեռաւ:

Հ. Զկնի մահուանն՝ զի՞նչ արարին զմարմինն Քրիստոսի:

Պ. Առին 'ի խաչէն, և եդին 'ի նորափոր գերեզմանի՝ անբաժանելի աստուածութեամբն:

Հ. Քանի՞ օր մնաց 'ի գերեզմանի:

Պ. Երեք օր:

Հ. Ո՞րով էջ 'ի դժոխս:

Պ. Բանական հոգւովն:

Հ. Յորժամ էջ 'ի դժոխս, զի՞նչ արար:

Պ. Աւերեաց զդժոխս և ազատեաց զհոգիսն՝ որք էին 'ի բանտին:

## Մասն Երրորդ։

Հ. Սուրբ Եկեղեցի ասելն զի՞նչ ասել է։

Պ. Եկեղեցին է ժողովումն ամենայն հաւատացելոց քրիստոնէից, որք մկրտեալք են յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Հ. Զի՞նչ է խորհուրդ Եկեղեցւոյ։

Պ. Է՛ ազատութիւն հոգևոր։

Հ. Քանի՞ք են։

Պ. Եօթն են։

Հ. Զի՞նչ են։

Պ. Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Ապաշխարութիւն, Պսակ, Ձեռնադրութիւն և Վերջին օծումն։

Հ. Մկրտութիւնն զի՞նչ է։

Պ. Է՛ լուացումն արտաքին մարմնոյ և մաքրումն ներքին հոգւոյ, և ազատութիւն 'ի սկզբնական մեղաց։

Հ. Դրոշմն զի՞նչ է։

Պ. Է՛ հաստատութեան խորհուրդ 'ի հաւատս Քրիստոսի, և կնիք ճանաչման. որ տուեալ լինի առ 'ի զօրացուցանել և քաջացուցանել զմարդն, և լինել զինուոր Քրիստոսի։

Հ. Հաղորդութիւնն զի՞նչ է։

Պ. Է՛ Մարմին և Արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և կերակուր հոգևոր՝ որ և վերջապէս տայ մեզ ժառանգել զկեանս յաւիտենականս։

Հ. Ապաշխարութիւնն զի՞նչ է։

Պ. Է՛ զանցեալ չարիսն լալ, և զլալի իրս մի՛ ևս գործել. կամ դարձումն 'ի մեղաց, և գտանել վերստին զկորուսեալ շնորհսն։

Հ. Քահանայութիւնն զի՞նչ է։

Պ. Է՛ հոգևոր իշխանութիւն իմն՝ որով կարող է մատուցանել զպատարագ, նա և զայլ խորհուրդս կատարել։

Հ. Պսակն զի՞նչ է։

Պ. Է՛ խորհուրդ Եկեղեցւոյ՝ որ 'ի բաց բառնայ զշնութիւն և ըզպոռնկութիւն, և անլուծանելի կապանօք կապէ զայրն և զկինն ընդ իրեարս վասն փրկութեան իւրեանց, ծնանիլ և

մնուցանել զորդիս 'ի պաշտումն Աստուծոյ։

Հ. Զի՞նչ է վերջին օծումն։

Պ. Է՛ խորհուրդ Եկեղեցւոյ, որ կացուցեալ է առ 'ի սրբել զնե-րելի մեղս։

Հ. Եկեղեցին մեր ունի՞ զխորհուրդս զայս։

Պ. Այո ունի, բայց 'ի մկրտութեն ընդ դրոշմին տայ ամ̃ մկրտելոց։

Հ. Վասն է՞ր այդպէս։

Պ. Վասն զի կացուցեալ էր խորհուրդս այս 'ի սրբել զներելի մեղս, որպէս խոստովանութիւնն զմահացուն։ Իսկ ոմանք այսու յուսով զխոստովանութիւնն բառնային, որպէս այլ ազգք ոմանք բարձեալ են։ Ուստի հարկ եղև սրբոց հարցն կցել զսա ընդ դրոշմին, զի մի՛ այսու յուսով բարձեալ լիցի խոստովա-նութիւնն։

Հ. Գո՞յ այլ ևս պատճառ, յաղագս կցելոյ զսա ընդ դրոշմին։

Պ. Այո, 'ի բառնալ Թագաւորութեան մերոյ՝ ազգ մեր տարա-գրեալ եղեն յաշխարհէ մերմէ ընդ տիեզերս. և բազումք 'ի մէջ գերութեան 'ի ձեռս անհաւատից մեռանէին առանց քահանայի. վասն այսորիկ սահմանեցին սուրբ Հարքն մեր 'ի մկրտութեանն ընդ դրոշմին տալ զօծումն զայն, զի մի՛ զրկեսցին 'ի սմանէ. այլ իբրև զդեղ նախապահպանողական՝ ամենե-քեան ունիցին առ ինքեանս։

Հ. Զի՞նչ է վերջին օծումն քահանայից։

Պ. Է պատիւ քահանայութեան կարգի։

Հ. Ուստի՞ առեալ է Եկեղեցին մեր զայս։

Պ. 'Ի սրբոյն Դիոնէսիոսէ Արիսպագացւոյ, որ 'ի մէջ գրոց յա-ղագս եկեղեցական քահանայապետութե Գլուխ 7. 'ի մասն 2, ասէ թէ Առաքելական աւանդութիւն էր զսրբազան ննջեցեալսն օծանել։

Հ. Առաքինութիւնն զի՞նչ է։

Պ. Է ունակութիւն մտաց՝ զոր ընդունի հոգին և լինի բարեգործ։

Հ. Քանի՞ք են։

Պ. Եօթն են։

Հ. Ո՞րպիսիք են՝ ասա՛, զոր լսեմ։

Պ. Հաւատ, Յոյս, Սէր, Արիութիւն, Արդարութիւն, Խոհեմու-թիւն և Ողջախոհութիւն։

Հ. Հաւատն զի՞նչ է։

Պ. Է պարգև մի հեղեալ ՚ի մեզ յԱստուծոյ, զի նովաւ ճանաչի-ցեմք զԱստուած ամենազօր և ստեղծիչ լեալ։

Հ. Յոյսն զի՞նչ է։

Պ. Յոյսն է ստոյգ ակնկալութիւն հանդերձեալ բարեացն, զոր տալոց է Աստուած յաւուրն հատուցման։

Հ. Սէրն զի՞նչ է։

Պ. Է ունակութիւն մտաց՝ որով սիրեմք զԱստուած վասն բա-րերարութեան, և զընկերս մեր հաւասար մեզ վասն Աստուծոյ։

Հ. Արիութիւնն զի՞նչ է։

Պ. Է ընդդէմ լինել փորձութեանց աշխարհի, և դժուարին կրիցն անհանդուրժելի։

Հ. Արդարութիւնն զի՞նչ է։

Պ. Է հաւասարաբաշխութիւն ՚ի հոգի և ՚ի մարմին, և ոչ իւրա-ցուցանել զինչս այլոց ինքեան։

Հ. Խոհեմութիւնն զի՞նչ է։

Պ. Է ընտրութիւն առնել ՚ի մէջ բարւոյ և չարի, չխաբել զոք, և չխաբիլ յումեքէ։

Հ. Ողջախոհութիւնն զի՞նչ է։

Պ. Է՛ ՚ի բաց մերժել յինքենէ զամենայն մարմնական հեշտութիւնս և ցանկութիւնս՝ որք պատահին։

Հ. Քանի՞ք են պարգևք հոգւոյն սրբոյ։

Պ. Եօթն են. այսինքն՝ Իմաստութիւն, Հանճար, Խորհուրդ, Զօրութիւն, Գիտութիւն, Աստուածպաշտութիւն և Երկիւղ Աստուծոյ։

Հ. Քանի՞ք են գործք ողորմութեան՝ որ ՚ի յիշատակ գան յաւուրն դատաստանի։

Պ. Եօթն են. այսինքն՝ Կերակրել զքաղցեալս։ Արբուցանել զծա-րաւեալս։ Զգեցուցանել զմերկս։ Ժողովել զօտարս։ Տե-սանել զհիւանդս։ Այց առնել բանտարկելոց։ Թաղել զմե-ռեալս։ Այսոքիկ են մարմնաւոր ողորմութիւնք։

Հ. Գո՞ն և հոգևոր ողորմութիւնք։

Պ. Այո՛ կան այլ ևս եօթն հոգևոր ողորմութիւնք. այսինքն՝ խրատել զերկմիտսն։ Առաջնորդել տգիտաց։ Կշտամբել զմեղաւորս։ Մխիթարել զտրտմեալս։ Թողուլ զպարտս։ Ցանձն առնուլ զվիշտս։ Աղաչել զԱստուած վասն կենդանեաց և մեռելոց և վասն մեղաց։

Հ. Քանի՞ք են օրինացն բանք, կամ 'ի ձեռն ո՞րոյ ետ Աստուած զնոսա։

Պ. Տասն են բանք օրինացն Աստուծոյ, որ 'ի ձեռն Մովսէսի ետ 'ի լեառն Սինայի։

Հ. Ասա՛ մի ըստ միոջէ զի գիտասցիս։

Պ. Առաջինն՝ Ես եմ Տէր Աստուած քո. և մի՛ եղիցի քեզ այլ աստուած բայց յինէն. և մի՛ դիցես զանուն Աստուծոյ քո 'ի վերայ սնոտեաց։ Երկրորդն՝ Մի՛ արասցես քեզ կուռս ըստ ամենայնի նմանութեան, յերկինս 'ի վեր և յերկիր 'ի խոնարհ։ Երրորդն՝ Յիշեա՛ զի սրբեսցես զօր շաբաթուն, որ մեզ կիրակի։ Չորրորդն՝ Պատուեա՛ զհայր քո և զմայր քո։ Հինգերորդն՝ Մի՛ սպանաներ։ Վեցերորդն՝ Մի՛ շնար։ Եօթներորդն՝ Մի՛ գողանար։ Ութներորդն՝ Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ։ Իններորդն՝ Մի՛ երդնուր սուտ յանուն Տեառն Աստուծոյ քո։ Տասներորդն՝ Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, և մի՛ տան նորա, և մի՛ ընչից նորա, և մի՛ ամենայն իրաց՝ որք նր իցեն։

Հ. Քանի՞ք են ազգք մեղաց։

Պ. Երկու. այսինքն՝ սկզբնական և ներգործական։

Հ. Զի՞նչ է սկզբնականն, և զի՞նչ ներգործականն։

Պ. Սկզբնականն 'ի հօրէն մերմէ Ադամայ սերեալ ունիմք ամենեքեան, որ ջնջի մկրտութեամբ։ Իսկ ներգործականն՝ յետ մկրտութեան կամօք մերովք զոր գործեմք՝ այն է.

Հ. Ներգործականն 'ի քանի՞ս բաժանի։

Պ. Յերիս. այսինքն՝ մահացու, ներելի և փոշատեսակ։

Հ. Մահացուն զի՞նչ է։

Պ. Է այն՝ զի յորոյ վերայ գտանիցի՝ զնա մահացուցանէ։

Հ. Ներելի և փոշատեսակն զի՞նչ է։

Պ. Նոքա են, զի եթէ մարդ ոք գործէ և մոռանայ, կամ թեթևապէս կրէ զապաշխարանսն, կամ լեապէս չկատարէ՝ թողու

Աստուած․ վասն զի ներելի և փոշատեսակ ասելն կարի թեթև մեղք ասելէ․ որպէս անուանքն պարզապէս յայտնեն ։

Հ․ Մահացու մեղք քանի՞ք են։

Պ․ Եօթն են․ այսինքն Հպարտութի, Նախանձ, Բարկութիւն, Ծուլութիւն, Ագահութիւն, Որկրամոլութիւն, և Բղջախոհութիւն։

Հ․ Վրէժխնդիր մեղք յԱստուծոյ ո՞յք են։

Պ․ Են այսոքիկ։ Անմեղ սպանումն, Արուագիտութիւն, Զրկանք աղքատաց, Հատանել զվարձս մշակաց։ Զորս այսոքիկ են սարսափելիք։

Հ․ Քանի՞ք են առաքինութիւնք ընդդէմ եօթն մոլութեանց։

Պ․ Եօթն են․ այսինքն խոնարհութիւն ընդդէմ Հպարտութեան։ Բարեհաճութիւն ընդդէմ Նախանձու։ Հեզութիւն ընդդէմ Բարկութեան։ Առատասրտութիւն ընդդէմ Ագահութեան։ Արիութիւն ընդդէմ Ծուլութեան։ Պահեցողութիւն ընդդէմ Որկրամոլութեան։ Ողջախոհութիւն ընդդէմ Բղջախոհութեան։

Հ․ Մեղքն քանի՞ ձևիւ գործեալ լինի ։

Պ․ Երեք․ այսինքն խորհրդով, Բանիւ, և Գործով։

Հ․ Պատմեա՛ մի ըստ միոջէ, որ իմանամ ։

Պ․ Խորհրդովն մեղանչել կոչի յորժամ 'ի սրտի մերում չար խորհիմք ։ Բանիւն այն է, երբ մեք յիշոցս հանեմք 'ի բերանոյ։ Գործովն զոր ձեռօք, կամ ոտիւք կատարեմք, և 'ի գլուխ ածեմք ։

Հ․ Քանի՞ ձևք են, որ զմարդն երկնչեցուցանեն 'ի գործելոյ զմեղս ։

Պ․ Չորս․ այսինքն մահն․ ահեղ դատաստանն․ դժոխքն ահագին․ և արքայութիւնն անճառ ։

Հ․ Մի միայն զքրիստոնէական հաւատոյ ուղղութիւնն ճանաչելով փրկութեան հասանի՞մք թէ ոչ։

Պ․ Մի միայն ճանաչողութեամբ ոչ հասանեմք ։

Հ․ Վասն է՞ր ։

Պ․ Վասն այն, զի հաւատք առանց գործոց նմանին մեռեալ մար-

դոյ ; որպէս սուրբ առաքեալն վկայէ, թէ հաւատք առանց գործոց մեռեալ է ։

Հ. Զի՞նչ են Բարի Գործք ։

Պ. Աղօթք, Պահք, և Ողորմութիւնք ։

Հ. Գիտե՞ս զՏէրունական աղօթքն ։

Պ. Այո՛ գիտեմ ։

Հ. Ասա՛ զոր տեսանեմ ։

Պ. Հայր մեր՝ որ յերկինս ես՝ սուրբ եղիցի անուն քո ․ եկեսցէ արքայութիւն քո ․ եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի ։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր ․ և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ․ և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ ։ Զի քո է արքայութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս՝ Ամէն ։

Հ. Գիտե՞ս 'ի դէմս սրբուհւոյ Աստուածածնին ամենամաքրելոյ աղօթսն ։

Պ. Այո՛ գիտեմ ։

Հ. Ասա՛ զոր լսայց ։

Պ. Անկանիմք առաջի քո տիրամայր սուրբ Աստուածածին ․ և աղաչեմք զանարատ զկոյսդ ․ բարեխօսեա՛ վասն անձանց մերոց ․ և աղաչեա՛ զմիածին որդիդ փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց ։ Որ արձակիչդ ես կապելոց՝ պարգևատու ամենեցուն ․ այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա՛ և զիս զբաղմամեղս 'ի կապանաց մահու՝ 'ի կեանսդ յաւիտենից՝ Ամէն ։

Հ. Ցորժամ մտանիցես առ սեղանն հաղորդութեան՝ զի՞նչ ասել պարտիս ։

Պ. Զաղօթս զայս ։ Օրհնեալ է պարգևատուն կենաց՝ և պարգևն անմահութեան՝ Քրիստոս Աստուած մեր ։

Հ. Ցորժամ առնուս զՄարմինն 'ի սեղանէն՝ զի՞նչ ասել պարտիս ։

Պ. Զաղօթս զայս ։ Օրհնեալ է շնորհն ձրի և պարգևն անծախելի՝ կենդանի և կենդանարար մարմին և արիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

Հ. Ցորժամ առնուս 'ի սրբութենէ սրբոյ՝ զի՞նչ ասել պարտիս ։

Պ. Զաղօթս սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին ։ Ախորժն Զե-

ընծայեա̈ ինձ 'ի փրկութիւն խոստովանիմ ճշմարտապէս մարմին և արիւն Քրիստոսի Աստուծոյ յուսոյ իմոյ։ և աղաղակեմ առ քեզ մեղայ յերկինս և առաջի քո։ Սրբեա զիս յամենայն պղծութենէ հոգւոյ և մարմնոյ. շնորհեա ինձ ժամանակ և ցանկութիւն ապաշխարութեան. փրկեա զիս յերևելի և յաներևոյթ թշնամւոյ. տպաւորեա յիս զօգուտն հոգւոյ և մարմնոյ իմոյ։ Պարգևեա ինձ բարեգործութիւն և բարեպաշտութեամբ զքեզ արժանապէս ճաշակել և փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից Ամէն։

—— 000——

## ԱՂՕԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ։

Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ 'ի չարէ։ Զի քո է արքայութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս. Ամէն։

——000——

## ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ ՄԱՐԻԱՄ։

Ողջոյն քեզ Մարիամ լի շնորհօք, ուրախ լեր բերկրեալ. Տէր ընդ քեզ. Օրհնեալ ես դու 'ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո Յիսուս. սրբուհի Մարիամ մայր Աստուծոյ բարեխօսեա վասն մեր մեղաւորացս, այժմ և 'ի ժամ մահու մերոյ. Ամէն։

———

Ընկանիմք առաջի քո Սուրբ Աստուածածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ. բարեխօսեա վասն անձանց մերոց. և աղաչեա զմիածին որդիդ փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։ Որ արձակիչդ ես կապելոց պարգևատու ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա և զիս զբազմամեղս 'ի կապանաց մահու 'ի կեանսն յաւիտենից։

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբն Տէր, ընկալ զաղաչանս մեր, և կեցո։

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԿԱՐՃԱՌՕՏ

'Ի պէտս տղայական մանկանց.

---

Հարց. Կարէ՞ս ինձ ասել մանուկ դու՝ թէ ո՛վ ստեղծ զքեզ։

Պատ. Ամենակալն Աստուած՝ որ արար զերկինս և զերկիր.

Հ. Զի՞նչ առնէ Աստուած վասն քո։

Պ. Նա պահէ զիս 'ի փորձութենէ զտիւ և զգիշեր, և նա հանապազ առնէ ինձ բարի։

Հ. Զի՞նչ պարտ է քեզ առնել վասն այս ամենայնի Աստուծոյ՝ որ այսպէս բարի է առ քեզ։

Պ. Զառաջինն պարտ է ինձ ուսանիլ առ 'ի ճանաչել զնա, և ապա պարտ է ինձ առնել զբարի առ 'ի հաճել զկամս նորա։

Հ. Ո՞ր Աստուած ուսուցանէ զմեզ ճանաչել զնա, և հաճել զկամս նորա։

Պ. 'Ի սուրբ բանի իւրում, որ պարունակեալ է յԱստուածաշնչին։

Հ. Ուսեալ ե՞ս դու ճանաչել, թէ ո՞վ է Աստուած։

Պ. Աստուած հոգի է. և թէպէտ մեք ոչ կարեմք տեսանել զնա, սակայն նա տեսանէ և գիտէ զամենայն իրս և կարէ առնել զամենայն ինչ։

Հ. Զի՞նչ պարտ է քեզ առնել՝ առ 'ի հաճել զԱստուած։

Պ. Հարկ է ինձ կատարել զպարտիս իմ և՛ առ Աստուած և՛ առ մարդիկ։

Հ. Զի՞նչ է պարտականութիւն քո առ Աստուած։

Պ. Պարտականութիւն է իմ առ Աստուած, երկնչիլ և պատուել զնա, սիրել և ծառայել նմա, աղօթել առ նա և գովել զնա։

Հ. Զի՞նչ է պարտականութիւն քո առ մարդիկ։

Պ. Պարտականութիւն իմ է առ մարդիկ, հնազանդիլ ծնողաց իմոց, խօսիլ զճշմարիտն հանապազ, և լինիլ համեստ և բարեբար առ ամենեսեան։

# A SHORT CATECHISM

## ADAPTED FOR CHILDREN OF TENDER YEARS.

---

Q. *Can you tell me, Child, who made you?*

A. The great God, who made heaven and earth.

Q. *What doth God do for you?*

A. He keeps me from harm by night and by day, and is always doing me good.

Q. *What must you do for this great God, who is so good to you?*

A. I must learn to know him first, and then I must do every thing to please him.

Q. *Where doth God teach us to know him, and to please him?*

A. In his holy word, which is contained in the Bible.

Q. *Have you learned to know who God is?*

A. God is a spirit; and though we cannot see him, yet he sees and knows all things, and can do all things.

Q. *What must you do to please God?*

A. I must do my duty both toward God and toward man.

Q. *What is your duty to God?*

A. My duty to God is, to fear and honour him, to love and serve him, to pray to him, and to praise him.

Q. *What is your duty to man?*

A. My duty to man is, to obey my parents, to speak the truth always, and to be honest and kind to all.

Q. *What good do you hope for, by seeking to please God?*

A. Then I shall be a child of God, and have God for my father and my friend for ever.

Հ. Զի՞նչ վարձատրութիւն ունի՝ ջանացողն հաճելի լինել Աստուծոյ.

Պ. Ցայնժամ ես լեցիմ որդի Աստուծոյ, և Աստուած եղիցի ինձ Հայր և բարեկամ մինչև յաւիտեան։

Հ. Եւ զի՞նչ լինիցի՝ եթէ դու ոչ երկնչիցես յԱստուծոյ, և ոչ սիրիցես զնա, և ոչ ջանայցես հաճելի լինել նմա։

Պ. Ապա ես եղէց մանուկ ամբարիշտ, և ամենակալն Աստուած բարկասցի ՚ի վերայ իմ։

Հ. Ընդէ՞ր դու երկնչիս ՚ի բարկութենէն Աստուծոյ։

Պ. Քանզի նա կարէ սպանանել զմարմին իմ. և նա կարէ առնել զհոգի իմ թշուառ զկնի մեռանելոյ մարմնոյ իմոյ։

Հ. Բայց դու չէ՞ երբէք գործեալ զգործ ինչ որ ՚ի բարկացուցանէր զԱստուած ՚ի վերայ քո։

Պ. Այո՛ ես երկնչիմ զի բազմիցս մեղուցեալ եմ ընդդէմ Աստուծոյ, և արժանի եմ բարկութեան Նորա։

Հ. Զի՞նչ նշանակէ մեղանչելն ընդդէմ Աստուծոյ։

Պ. Մեղանչելն ընդդէմ Աստուծոյ այս է՝ առնել զայնպիսի իրս, զորս Աստուած արգելու ինձ. և չառնել զոր ինչ Աստուած հրամայէ ինձ։

Հ. Եւ զի՞նչ պարտ է քեզ առնել որ ՚ի զերծիլ ՚ի բարկութենէն Աստուծոյ, որպէս մեղք քո արժանի են կորուսանել զքեզ։

Պ. Ինձ պարտ է տխրել վասն մեղաց իմոց. ինձ պարտ է աղօթել առ Աստուած ներել ինձ զանցեալ մեղս իմ, և տալ ինձ ծառայել Նմա առ յապայն։

Հ. Աստուած ներէ՞ քեզ՝ եթէ դու աղօթիցես վասն մեղաց քոց։

Պ. Ես յուսամ զի Նա ինձ ներեսցէ, եթէ ես ապաւինիցիմ յողորմութիւն Նորա, վասն սուրբ խաչի Յիսուսի և վասն չարչարանաց Նորին։

Հ. Դու գիտե՞ս ո՞վ է Յիսուս Քրիստոս։

Պ. Նա է որդին Աստուծոյ իջեալ ՚ի յերկնից փրկել զմեզ ՚ի մեղաց մերոց և ՚ի բարկութենէն Աստուծոյ։

Հ. Զի՞նչ արար Քրիստոս որ ՚ի փրկել զմարդիկ։

Պ. Նա հնազանդեցաւ հրամանին Աստուծոյ, և ուսոյց մեզ նոյնպէս հնազանդիլ։

Q. *And what if you do not fear God, nor love him, nor seek to please him?*

A. Then I shall be a wicked child, and the great God will be angry with me.

Q. *Why are you afraid of God's anger?*

A. Because he can kill my body, and he can make my soul miserable after my body is dead.

Q. *But have you never done any thing to make God angry with you already?*

A. Yes, I fear I have too often sinned against God, and deserved his anger.

Q. *What do you mean by sinning against God?*

A. To sin against God is, to do any thing that God forbids me, or not to do what God commands me.

Q. *And what must you do to be saved from the anger of God, which your sins have deserved?*

A. I must be sorry for my sins, I must pray to God to forgive me what is past; and serve him better for the time to come.

Q. *Will God forgive you if you pray for it?*

A. I hope he will forgive me if I trust in his mercy, for the sake of what Jesus Christ has done, and what he has suffered.

Q. *Do you know who Jesus Christ is?*

A. He is God's own Son, who came down from heaven to save us from our sins, and from God's anger.

Q. *What has Christ done towards the saving of men?*

A. He obeyed the law of God himself, and has taught us to obey it also.

Q. *What has Christ suffered in order to save men?*

A. He died for sinners, who had broken the law of God, and deserved to die themselves.

Հ. Զի՞նչ ըրըրանս կրէայ Քրիստոս առ ՚ի ճրկէլ վճարտին ։

Պ. Նա մեռաւ վասն մեղաւորաց՝ որք ոչ պահեցին զօրէնս Աստուծոյ, և արժանի էին մեռանիլ ինքեանք ։

Հ. Ո՞ւր է Յիսուս Քրիստոս ։

Պ. Նա կենդանի է կրկին. և գնացեալ է ՚ի յերկինս, առ ՚ի պատրաստել անդ զտեղի նոցա՝ որք ծառայեն Աստուծոյ և սիրեն զորդին իւր զՅիսուս։

Հ. Դու կարէ՞ս ինքնին սիրել, և ծառայել Աստուծոյ և Քրիստոսի ։

Պ. Ո՛չ. ոչ կարեմ սիրել ինքնին. բայց Աստուած օգնեսցէ ինձ հոգւով իւրով, եթէ ես խնդրեցից զշնորհս ՚ի նմանէ ։

Հ. Յիսուս Քրիստոս եկեսցէ՞ յաշխարհ կրկին ։

Պ. Քրիստոս եկեսցէ կրկին. և կոչեսցէ զիս և զամենայն երկիր ՚ի դատաստան վասն գործոց մերոց ։

Հ. Ա՞յն ի՞նչ վախճան պարգևէ փաւ վճարելոյ ըւյս ։

Պ. Զի որդիք Աստուծոյ և արք ամբարիշտք գտցեն զփոխարէն գործոց իւրեանց ։

Հ. Եթէ դու լինիցիս ամբարիշտ, զի՞նչ լինիցի վերջ քոյ ։

Պ. Եթէ ես իցեմ ամբարիշտ, անկայց ՚ի հուրն մշտնջենաւոր, ՚ի մէջ դաժան և Թշուառ կենդանեաց ։

Հ. Ե՞ւ ո՞ւր երթիցես, եթէ դու իցես որդի Աստուծոյ ։

Պ. Եթէ իցեմ որդի Աստուծոյ, ես ելից ՚ի յերկինս, առ ՚ի բնակիլ անդ ընդ Աստուծոյ և Քրիստոսի մինչև ցյաւիտեան։

Յաղագս անուանց եղելոց ՚ի հին կտակարանին ։

Հ. Ո՞վ էր Ադամ ։

Պ. Առաջին մարդն՝ զոր Աստուած ստեղծ, և հայր ամենեցուն ։

Հ. Ո՞վ էր Եւայ ։

Պ. Առաջին կինն, և նա էր մայր ամենեցուն ։

Հ. Ո՞վ էր Կայէն ։

Պ. Ադամայ երէց որդին, և նա սպան զեղբայր իւր զԱբէլ ։

Հ. Ո՞վ էր Աբէլ ։

Պ. Նա էր այր բարեգոյն քան զԿայէն, և յաղագս այսորիկ Կայէն ատեաց զնա ։

Q. *Where is Jesus Christ?*

A. He is alive again, and gone to heaven, to provide a place there for all that serve God, and love his Son Jesus.

Q. *Can you of yourself love and serve God and Christ?*

A. No, I cannot do it of myself, but God will help me by his own Spirit, if I ask for it.

Q. *Will Jesus Christ ever come again?*

A. Christ will come again, and call me and all the world to account for what we have done.

Q. *For what purpose is this account to be given?*

A. That the children of God, as well as the wicked, may all receive according to their works.

Q. *What must become of you if you are wicked?*

A. If I am wicked, I shall be sent down to everlasting fire in hell, among wicked and miserable creatures.

Q. *And whither will you go if you are a child of God?*

A. If I am a child of God, I shall be taken up to heaven, and dwell there with God and Christ for ever. Amen.

---

THE SCRIPTURE NAMES IN THE OLD TESTAMENT.

Q. *Who was Adam?*

A. The first man that God made, and the father of us all.

Q. *Who was Eve?*

A. The first woman, and she was the mother of us all.

Q. *Who was Cain?*

A. Adam's eldest son, and he killed his brother Abel.

Q. *Who was Abel?*

A. A better man than Cain, and therefore Cain hated him.

Q. *Who was Enoch?*

A. The man who pleased God, and he was taken up to heaven without dying.

Q. *Who was Noah?*

A. The good man who was saved when the world was drowned.

Հ. Ո՞վ էր Ենովք ։

Պ. Այրն այն ընդ որ հաճեցաւ Աստուած . և նա յափշտակեցաւ ՚ի յերկինս առանց մեռանելոյ ։

Հ. Ո՞վ էր Նոյ ։

Պ. Այրն արդար՝ որ փրկեցաւ երբ աշխարհս ջրհեղեղաւ կորեաւ ։

Հ. Ո՞վ էր Յովբ ։

Պ. Այրն համբերող ՚ի մէջ ցաւոց վշտաց ։

Հ. Ո՞վ էր Աբրահամ ։

Պ. Յարացոյց հաւատացելոց և բարեկամ Աստուծոյ ։

Հ. Ո՞վ էր Իսահակ ։

Պ. Որդին Աբրահամու ըստ խոստմանն Աստուծոյ ։

Հ. Ո՞վ էր Սառայ ։

Պ. Կին Աբրահամու . և նա էր մայր Իսահակայ ։

Հ. Ո՞վ էր Յակոբ ։

Պ. Իսահակայ կրտսեր որդին . և նա խորամանկութեամբ ընկալաւ զօրհնութիւն հօր իւրոյ ։

Հ. Զի՞նչ էր Իսրայէլ։

Պ. Անուն նոր՝ զոր Աստուած ինքնին ետ Յակոբու ։

Հ. Ո՞վ էր Յովսէփ ։

Պ. Իսրայէլի սիրեցեալ որդին . բայց եղբարք նորա մատնեցին զնա , և վաճառեցին զնա ։

Հ. Ո՞յք էին երկոտասան պատրիարգունքն ։

Պ. Երկոտասան որդիքն Յակոբու և հարք ազգացն իսրայէլացւոց։

Հ. Ո՞վ էր Փարաւոն ։

Պ. Թագաւորն եգիպտացւոց՝ որ հեղձուցանէր զմանկունս . և նա ընկղմեալ հեղձաւ ՚ի կարմիր ծովուն ։

Հ. Ո՞վ էր Մովսէս ։

Պ. Ազատիչ և օրէնսդիր ժողովրդոց իսրայէլացւոց . որոց և առաջնորդեաց ընդ անապատն ։

Հ. Ո՞վ էր Ահարոն ։

Պ. Եղբայր Մովսիսի . և նա էր աւագ քահանայ ՚ի մէջ իսրայէլացւոց։

Հ. Ո՞յք էին Քահանայք ։

Պ. Նոքա էին՝ որ մատուցանէին զպատարագս առ Աստուած ,

Q. *Who was Job?*

A. The most patient man under pains and losses.

Q. *Who was Abraham?*

A. The pattern of believers, and the friend of God.

Q. *Who was Isaac?*

A. Abraham's son according to God's promise.

Q. *Who was Sarah?*

A. Abraham's wife, and she was Isaac's mother.

Q. *Who was Jacob?*

A. Isaac's youngest son, and he craftily obtained his father's blessing.

Q. *What was Israel?*

A. A new name that God himself gave to Jacob.

Q. *Who was Joseph?*

A. Israel's beloved son; but his brethren hated him, and sold him.

Q. *Who were the twelve Patriarchs?*

A. The twelve sons of Jacob, and the fathers of the people of Israel.

Q. *Who was Pharaoh?*

A. The king of Egypt, who drowned the children, and he was drowned in the Red Sea.

Q. *Who was Moses?*

A. The deliverer and lawgiver of the people of Israel, and he led them through the wilderness.

Q. *Who was Aaron?*

A. Moses's brother, and he was the first high-priest of Israel.

Q. *Who were the Priests?*

A. They that offered sacrifices to God, and taught his laws to men.

Q. *Who was Joshua?*

A. The leader of Israel when Moses was dead, and he brought them into the promised land.

և ուսուցանէին զօրէնս մարդկան։

Հ․ Ո՞վ էր Յէսու։

Պ․ Զօրագլուխ իսրայէլացւոց՝ երբ Մովսէս վախճանեցաւ․ և նա էած զնոսա յերկիրն աւետեաց։

Հ․ Ո՞վ էր Սամփսոն։

Պ․ Այր հզօր, և նա սպան զհազարաւոր Թշնամիս իւր ծնօտիւ իշոյ։

Հ․ Ո՞վ էր Հեղի։

Պ․ Նա էր բարեպաշտ ծերունի, բայց Աստուած բարկացաւ ՚ի վերայ նորա վասն ոչ պահելոյ զորդիս յամբարշտութենէ։

Հ․ Ո՞վ էր Սամուէլ։

Պ․ Մարգարէ՝ զոր Աստուած կոչեաց երբ նա էր մանուկ։

Հ․ Ո՞յք էին Մարգարէք։

Պ․ Մարդիկ՝ զորս Աստուած լուսաւորեաց գուշակել զիրս ապագայս։

Հ․ Ո՞վ էր Դաւիթ։

Պ․ Այր ըստ սրտին Աստուծոյ․ որ ՚ի ցպոյ հովուէին ամբարձաւ ՚ի գաւազան արքունի։

Հ․ Ո՞վ էր Գողիաթ։

Պ․ Այր հսկայ՝ զոր Դաւիթ սպան պարսաքարիւ։

Հ․ Ո՞վ էր Աքաաբ։

Պ․ Դաւթայ չար որդին․ որ ապստամբեցաւ ՚ի հօրէ իւրմէ, և սպանաւ կախեալ զփայտէն։

Հ․ Ո՞վ էր Սողոմոն։

Պ․ Թագաւոր իսրայէլացւոց, և իմաստնագոյն քան զամ մարդիկ։

Հ․ Ո՞վ էր Յովբ։

Պ․ Յոյժ սակաւատի Թագաւոր․ որոյ փափուկ էր սիրտ, և երկնչէր յԱստուծոյ։

Հ․ Ո՞վ էր Եսայի։

Պ․ Մարգարէն՝ որ խօսեցաւ վասն Յիսուսի Քրիստոսի առաւել քան զայլս։

Հ․ Ո՞վ էր Եղիա։

Պ․ Մարգարէ՝ որ յափշտակեցաւ յերկինս ՚ի կառս հրեղէնս։

Հ․ Ո՞վ էր Եղիսէ։

Պ․ Մարգարէ՝ որ այպն եղև ՚ի մանկանց, և արջ մի վայրենի պա-

*Q. Who was Sampson ?*

A. The strongest man, and he slew a thousand of his enemies with a jaw-bone.

*Q. Who was Eli ?*

A. He was a good old man, but God was angry with him for not keeping his children from wickedness.

*Q. Who was Samuel ?*

A. The prophet whom God called when he was a child.

*Q. Who were the Prophets ?*

A. Persons whom God taught to foretel things to come, and to make known his mind to the world.

*Q. Who was David ?*

A. The man after God's own heart, who was raised from a shepherd to be a king.

*Q. Who was Goliath ?*

A. The giant whom David slew with a sling and a stone.

*Q. Who was Absalom ?*

A. David's wicked son, who rebelled against his father, and he was killed as he hung on a tree.

*Q. Who was Solomon ?*

A. David's beloved son, the king of Israel, and the wisest of men.

*Q. Who was Josiah ?*

A. A very young king, whose heart was tender, and he feared God.

*Q. Who was Isaiah ?*

A. The prophet who spoke more of Jesus Christ than the rest.

*Q. Who was Elijah ?*

A. The prophet who was carried to heaven in a chariot of fire.

*Q. Who was Elisha ?*

A. The prophet who was mocked by the children, and a wild bear tore them to pieces.

տառեաց զնոսա 'ի մասունս մասունս ։

Հ․ Ո՞վ էր Գեհեզի ։

Պ․ Ծառայ մարգարէին՝ որ ասաց սուտ և եղև բորոտ․ և ախտս այս էր անբուժելի ։

Հ․ Ո՞վ էր Յովնան ։

Պ․ Մարգարէն՝ որ մնաց զերիս տիւս և զերիս գիշերս 'ի փոր կիտին ։

Հ․ Ո՞վ էր Դանիէլ ։

Պ․ Մարգարէն՝ որ անվնաս մնաց 'ի գուբն առիւծուց, զի էր երկիւղած և աղօթէր առ Աստուած ։

Հ․ Ո՞յք էին Սեդրաք, Միսաք, և Աբեդնագով ։

Պ․ Երեք եբրայեցիքն՝ որք ոչ երկիրպագին առաջի պատկերին, և արկան 'ի հնոցն բորբոքեալ, և հուրն ոչ այրեաց զնոսա ։

Հ․ Ո՞վ էր Նաբուգոդոնոսոր ։

Պ․ Ամբարտաւան արքայն բաբելացւոց՝ որ խելագարեցաւ և անկաւ 'ի մէջ գազանաց անտառին ։

Յաղագս անձանց եղելոց 'ի նոր կտակարանին ։

Հ․ Ո՞վ էր Յիսուս Քրիստոս ։

Պ․ Որդի Աստուծոյ, և փրկիչ մարդկան ։

Հ․ Ո՞վ էր կոյսն Մարիամ ։

Պ․ Մայրն Յիսուսի Քրիստոսի ։

Հ․ Ո՞վ էր Յովսէփ հիւսն ։

Պ․ կարծեցեալ հայրն [illegible] սա ամուսնացեալ էր ընդ մօր նր ։

Հ․ Ո՞յք էին Եբրայեցիք ։

Պ․ Տոհմ Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ․ և Աստուած ընտրեաց զնոսա իւր 'ի ժողովուրդս ։

Հ․ Ո՞յք էին Հեթանոսք ։

Պ․ Ամենայն ազգք, բայց միայն 'ի հրէից ։

Հ․ Ո՞վ էր Կեսարն ։

Պ․ Կայսր Հռովմայեցւոց, և իշխան աշխարհի ։

Հ․ Ո՞վ էր Մեծն Հերովդէս ։

Պ․ Թագաւոր եբրայեցւոց, որ սպան զամենայն մանկունս 'ի քաղաքի իմիք, և յուսայր սպանանել զՔրիստոս ։

Q. *Who was Gehazi?*

A. The prophet's servant who told a lie, and he was struck with a leprosy which could never be cured.

Q. *Who was Jonah?*

A. The prophet who lay three days and three nights in the belly of a fish,

Q. *Who was Daniel?*

A. The prophet who was saved in the lion's den, because he prayed to God.

Q. *Who were Shadrach, Meshach, and Abednego?*

A. The three Jews who would not worship an image, and they were cast into the fiery furnace and were not burnt.

Q. *Who was Nebuchadnezzar?*

A. The proud king of Babylon, who ran mad, and was driven among the beasts.

---

The Scripture Names in the New Testament.

Q. *Who was Jesus Christ?*

A. The son of God, and the Saviour of men.

Q. *Who was the Virgin Mary?*

A. The mother of Jesus Christ.

Q. *Who was Joseph the carpenter?*

A. The supposed father of Christ, because he married his mother.

Q. *Who were the Jews?*

A. The family of Abraham, Isaac, and Jacob; and God chose them for his own people.

Q. *Who were the Gentiles?*

A. All the nations besides the Jews.

Q. *Who was Cæsar?*

A. The Emperor of Rome, and the ruler of the world.

Q. *Who was Herod the Great?*

A. The king of Judea, who killed all the children in a town, in hopes to kill Christ.

Հ. Ո՞վ էր Յովհաննէս Մկրտիչ։

Պ. *Մարգարէն՝ որ ասաց եբրայեցւոց, թէ Քրիստոս եկեալ էր։*

Հ. Ո՞վ էր Փոն Հերովդէս։

Պ. *Թագաւոր գալիլիացւոց, որ եհատ զգլուխն մկրտչին Յովհաննու։*

Հ. Ո՞յք էին աշակերտք Քրիստոսի։

Պ. *Նոքա՝ ոյք աշակերտեալ էին նմա, որպէս Վարդապետին իւրեանց։*

Հ. Ո՞վ էր Նաթանայէլ։

Պ. *Աշակերտ Քրիստոսի, և այր առանց խորամանկութեան։*

Հ. Ո՞վ էր Նիկոդեմոս։

Պ. *Աշակերտ երկչոտ՝ որ եկեալ էր առ Յիսուս ՚ի գիշերի։*

Հ. Ո՞վ էր Մարիամ Մագդաղենացի։

Պ. *Կին մեղաւոր՝ որ եօծ զոտսն իւղով, և ընջեաց զոտս նորա հերով իւրով։*

Հ. Ո՞վ էր Ղազարոս։

Պ. *Բարեկամ Քրիստոսի, որ յարոյց զնա ՚ի կեանս յորժամ նա մեռեալ էր չորեքօրեայ։*

Հ. Ո՞վ էր Մարթա։

Պ. *Քոյր Ղազարոսի՝ որ կարի զբաղեալ էր առ ՚ի պատրաստել զճաշ վասն Քրիստոսի։*

Հ. Ո՞վ էր Մարիամ՝ քոյր Մարթայի։

Պ. *Կինն՝ որ ընտրեաց զմասն բարի, և ունկնդիր եղև քարոզութեան Յսի։*

Հ. Ո՞յք էին Առաքեալքն։

Պ. *Այնոքիկ աշակերտք՝ զորս Քրիստոս ընտրեաց ՚ի գլխաւոր պաշտօնեայս իւրոյ Աւետարանի։*

Հ. Ո՞վ էր Սիմոն Պետրոս։

Պ. *Առաքեալն՝ որ ուրացաւ զՔրիստոս և զղջացաւ։*

Հ. Ո՞վ էր Յովհաննէս։

Պ. *Սիրեցեալ առաքեալն՝ որ անկաւ զլանջօքն Յիսուսի։*

Հ. Ո՞վ էր Թովմաս։

Պ. *Առաքեալն՝ զոր դժուարին էր հաւատացուցանել թէ Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց։*

Հ. Ո՞վ էր Յուդա։

Q. *Who was John the Baptist?*

A. The prophet who told the Jews that Christ was come.

Q. *Who was the other Herod?*

A. The king of Galilee, who cut off John the Baptist's head.

Q. *Who were the disciples of Christ?*

A. Those who learned of him as their master.

Q. *Who was Nathaniel?*

A. A disciple of Christ, and a man without guile.

Q. *Who was Nicodemus?*

A. The fearful disciple, who came to Jesus by night.

Q. *Who was Mary Magdalene?*

A. A great sinner, who washed Christ's feet with her tears, and wiped them with her hair.

Q. *Who was Lazarus?*

A. A friend of Christ's whom he raised to life, when he had been dead four days.

Q. *Who was Martha?*

A. Lazarus's sister, who was cumbered too much in making a feast for Christ.

Q. *Who was Mary the sister of Martha?*

A. The woman that chose the better part, and heard Jesus preach.

Q. *Who were the Apostles?*

A. Those disciples whom Christ chose for the chief ministers of his gospel.

Q. *Who was Simon Peter?*

A. The Apostle who denied Christ, and repented.

Q. *Who was John?*

A. The beloved apostle who leaned on the bosom of Christ.

Q. *Who was Thomas?*

A. The apostle who was hard to be persuaded that Christ rose from the dead.

Պ. Ամբարիշտ աշակերտն՝ որ մատնեաց զՔրիստոս համբուրիւ ։

Հ. Ո՞վ էր Կայիափա ։

Պ. Քահանայապետն՝ որ դատապարտեաց զՔրիստոս ։

Հ. Ո՞վ էր Պիղատոս Պոնտացի ։

Պ. Դատաւոր Իսրայէլի՝ որ հրամայեաց 'ի խաչ հանել զՔրիստոս ։

Հ. Ո՞վ էր Յովսէփ Արիմաթացի ։

Պ. Մեծատուն ոմն՝ որ թաղեաց զմարմին Քրիստոսի 'ի նորափոր գերեզմանի ։

Հ. Ո՞յք էին չորս Աւետարանիչքն ։

Պ. Մատթէոս, Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս ։ Որք գրեցին զպատմութիւն վարուց և մահուանն Քրիստոսի ։

Հ. Ո՞յք էին Անանիաս և Սափիրա ։

Պ. Այր ոմն և կին իւր, որք եղեն սպանեալ վասն ստախօսութեն ։

Հ. Ո՞վ էր Ստեփաննոս ։

Պ. Առաջին այրն՝ որ նահատակեցաւ վասն սիրոյն Քրիստոսի ։

Հ. Ո՞վ էր Պօղոս ։

Պ. Երիտասարդ ոմն՝ որ էր զառաջինն հալածիչ և յետ այնորիկ եղև առաքեալ Քրիստոսի ։

Հ. Ո՞վ էր Տաբիթա կամ Այծեմնիկն ։

Պ. Կին բարեպաշտ՝ որ պատրաստեաց զհանդերձս 'ի պէտս աղքա-տաց. և յարեաւ 'ի մեռելոց ։

Հ. Ո՞վ էր Եղիմաս ։

Պ. Ամբարիշտ ոմն՝ որ եղև աչօք կոյր վասն խօսելոյ ընդդէմ Աւե-տարանին ։

Հ. Ո՞վ էր Ապողոս ։

Պ. Ջերմ և կենդանի քարոզիչ Աւետարանին ։

Հ. Ո՞վ էր Եւտիքոս ։

Պ. Պատանի ոմն՝ որ ննջեաց 'ի ժամ քարոզին, և անկեալ 'ի վայր մեռաւ ։

Հ. Ո՞վ էր Տիմոթէոս ։

Պ. Փոքրիկ պաշտօնեայ՝ որ գիտէր զսբ գիրս 'ի մանկութենէ իւրմէ ։

Հ. Ո՞վ էր Ագրիպպաս ։

Պ. Թագաւոր ոմն՝ որ սակաւ քէն յօժարեալ էր լինել Քրիստոնեայ ։

Q. *Who was Judas?*

A. The wicked disciple who betrayed Christ with a kiss.

Q. *Who was Caiaphas?*

A. The high-priest who condemned Christ.

Q. *Who was Pontius Pilate?*

A. The governor of Judea, who ordered Christ to be crucified.

Q. *Who was Joseph of Arimathea?*

A. A rich man, who buried Christ in his own tomb.

Q. *Who were the four Evangelists?*

A. Matthew, Mark, Luke, and John, who wrote the history of Christ's life and death.

Q. *Who were Ananias and Sapphira?*

A. A man and his wife, who were struck dead for telling a lie.

Q. *Who was Stephen?*

A. The first man who was put to death for Christ's sake.

Q. *Who was Paul?*

A. A young man who was first a persecutor, and afterwards an apostle of Christ.

Q. *Who was Dorcas?*

A. A good woman who made clothes for the poor, and she was raised from the dead.

Q. *Who was Elymas?*

A. A wicked man, who was struck blind for speaking against the gospel.

Q. *Who was Apollos?*

A. A warm and lively preacher of the gospel.

Q. *Who was Eutychus?*

A. A youth who slept at sermon, and falling down was taken up dead.

Q. *Who was Timothy?*

A. A young minister who knew the Scriptures from his youth.

Q. *Who was Agrippa?*

A. A king who was almost persuaded to be a Christian.

## ՏԱՍՆ ՊԱՏԳԱՄՔՆ ․

1․ Ես եմ Տէր Աստուած քո՝ որ հանի զքեզ յերկրէն եգիպտացւոց՝ ՚ի տանէ ծառայութեան ։ Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն ։

2․ Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան ․ որ ինչ յերկինս ՚ի վեր , և որ ինչ յերկիր ՚ի խոնարհ , և որ ինչ ՚ի ջուրս ՚ի ներքոյ երկրի ։ Մի՛ երկիրպագանիցես նոցա , և մի՛ պաշտեսցես զնոսա ․ զի ես եմ տէր աստուած քո՝ աստուած նախանձոտ , որ հատուցանեմ զմեղս հարանց՝ որդւոց , յերիս և ՚ի չորս ազգս ատելեաց իմոց ։ Եւ առնեմ զողորմութիւն ՚ի հազար ազգս սիրելեաց իմոց , և ոյք պահեն զհրամանս իմ ։

3․ Մի՛ առնուցուս զանուն տեառն Աստուծոյ քոյ ՚ի վ՟ր սնոտեաց ․ զի ոչ սրբեսցէ տէր զայն , որ առնուցու զանուն նորա ՚ի վերայ սնոտեաց ։

4․ Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա ։ Զվեց օր գործեսցես , և արասցես զամենայն գործս քո ։ Յաւուրն եօթներորդի շաբաթ տեառն Աստուծոյ քում , մի՛ գործեսցես ՚ի նմա զամենայն գործ քո՝ դու և ուստր քո և դուստր քո , ծառայ քո , աղախին քո ․ եզն քո և էշ քո , և ամենայն անասուն քո ․ և եկն քո և պանդուխտն քո՝ որ ՚ի քեզ ։ Զի զվեց օր արար տէր Աստուած զերկինս և զերկիր և զծով և զամենայն որ ՚ի նոսա . և հանգեաւ յաւուրն եօթներորդի ․ վասն այնորիկ օրհնեաց տէր զօրն եօթներորդ , և սրբեաց զնա ։

5․ Պատուեա՛ զհայր քո և զմայր քո ․ զի քեզ բարի՛ լինիցի , և զի երկայնակեա՛ց լինիցիս ՚ի վերայ երկրին բարութեան՝ զոր տէր Աստուած տացէ քեզ ։

6․ Մի՛ սպանաներ ։

7․ Մի՛ շնար ։

8․ Մի՛ գողանար ։

9․ Մի՛ սուտ վկայութիւն վկայեր զընկերէ քումմէ ։

10․ Մի՛ ցանկանար տան ընկերի քո , և մի՛ անդոյ նորա ։ Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քոյ , և մի՛ ծառայի նորա , և մի՛ աղախ-

նոյ նորա, և մի՛ եզին նորա, և մի՛ իշոյ նորա, և մի՛ ամենայն անասնոյ նորա, և մի՛ ամենայնի զինչ ընկերի քոյ իցէ ։

## ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ ։

Հաւատամք 'ի մի Աստուած Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի․ երևելեաց և աներևութից։ Եւ 'ի մի տէր Յիսուս Քրիստոս՝ Որդին Աստուծոյ․ ծնեալ յԱստուծոյ Հօրէ միածին․ այսինքն՝ յէութենէ Հօր ։ Աստուած յաստուծոյ․ լոյս 'ի լուսոյ․ Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ․ ծնունդ և ոչ արարած ։ Նոյն ինքն 'ի բնութենէ Հօր․ որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի․ երևելիք և աներևոյթք ։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութե՝ իջեալ 'ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով ։ Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ, և զամենայն որ ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք ։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ․ յերրորդ աւուր յարուցեալ, և ելեալ 'ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր ։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս․ որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան ։ Հաւատամք և 'ի սուրբ Հոգին․ յանեղն և 'ի կատարեալն ։ Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս ։ Որ էջն 'ի յորդանան․ քարոզեաց զառաքեալսն․ և բնակեցաւ 'ի Սուրբսն ։ Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի ։ 'Ի մի մկրտութիւն․ յապաշխարութիւն․ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց ։ 'Ի յարութիւն մեռելոց․ 'ի դատաստանն յաւիտենից․ հոգւոց և մարմնոց ։ Յարքայութիւնն երկնից և 'ի կեանսն յաւիտենականս ։

Մինչև ցայս են հաւատոյ բանք ։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն՝ յորժամ ոչ էր Որդի․ կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր սուրբ Հոգի ։ Կամ թէ՝ յոչ էից եղեն կամ յայլմէ էու-

թենէ ասեն լինիլ զորդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին ։ Եւ թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք՝ զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական Սուրբ եկեղեցի ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս՝ երկիրպագանելով սրբոյ Երրորդութեան և մի Աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս՝ Ամէն ։

——000——

Մաղթանք զօրաւոր ընդդէմ արհաւրաց գիշերայնոց. 'ի սրբոյն Գրիգորէ Նարեկացւոյ ասացեալ ։ ԺԲ ։

Ընկալ քաղցրութեամբ տէր աստուած հզօր՝ զդառնացողիս զաղաչանս ։ Մատիր գթութեամբ առ պատկառեալս դիմօք ։ Փարատեա ամենապարգև՝ զամօթական տխրութիւնս ։ Բարձ յինէն ողորմած՝ զանըմբերելի ծանրութիւնս ։ Անջրպետեա հնարաւոր՝ զմահացու կրթութիւնս ։ Աւարեա միշտ յաղթօղ՝ զխաբողին հաճութիւնս ։ Բացադրեա վերնային՝ զմոլեկոյն մառախուղ ։ Կնքեա կեցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս ։ Ցրուեա ծածկատես՝ զըմբռնողին չար գլտմունս ։ Խորտակեա անքննին՝ զմարտողին դիմեցմունս ։ Տեառնագրեա քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս ։
Պարփակեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս ։ Գծագրեա քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս ։ Կերպացո զքո նշանդ 'ի հետս ելից մաղթողիս ։ Ամրացո քո աջովդ զհանգստեանս խշտիս ։ Մաքրեսցես 'ի հալքից զծածկարան անկողնոյս ։ Պահեսցես քո կամօքդ զտպաւորեալ անձն հոգւոյս ։ Անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս ։ Կացուսցես շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեսցես 'ի դիմի ընդդէմ դիւացն դասու ։ Տուր հանգիստ բերկրութեան մահահանգոյս նիրհման 'ի խորութեան գիշերիս՝ բարեխօսութեամբ և հայցուածովք սրբուհւոյ ածածնիդ և ամենայն ընտրելոց ։
Ամփոփեալ պարուրեա զպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից՝ անզարհուրելի զետեղմամբ 'ի ծփական խռովութեանց

կենդանական զբաղմանց՝ անրջական երազոց՝ խօլականաց ցնորից ։ Յիշատակաւ քո յուսոյդ՝ անվնասելի պաշտպանեալ. և սթափեալ վերստին 'ի նիրհմանէ ծանրութեանց՝ ամենազգաստ արթնութեամբ հոգենորոգ զուարթութեամբ 'ի քեզ արձանացեալ ։ Զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոյ՝ քեզ ամէնօրհնեալ Թագաւոր փառաց՝ անճառից փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ յերկինս առաքել. զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

## Աղօթք վերստին Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն ։ ՂԳ ։

Աստուած յաւիտենական՝ բարերար և ամենակալ. ստեղծիչ լուսոյ և յօրինիչ գիշերոյ. կեանք 'ի մահու՝ և լոյս 'ի խաւարի. յոյս ակնունողաց՝ և երկայնմտութիւն տարակուսելոց ։ Որ ամենարուեստ իմաստութեամբ քո՝ դարձուցանես յայգ զստուերս մահու ։ Աննուազ ծագումն և անմուտ արեգակն ։ Քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ. որում կրկնի ծունր երկրպագուն ամենայն եղելոց. երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց ։ Որ լսես զհեծութիւն կապելոց. և հայիս յաղօթս խոնարհաց. և ընդունիս զխնդրուածս նոցա ։ Աստուած իմ և Թագաւոր իմ. կեանք իմ և ապաւէն իմ. յոյս իմ և վստահութիւն իմ. Յիսուս Քրիստոս աստուածդ ամենայնի ։ Սուրբդ հանգուցեալ 'ի հոգիս սրբոց. մխիթարութիւն վշտաց, և քաւարան մեղուցելոց. որ գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա ։ Առաքեա զպահպանողական զօրութիւն աջոյ քո՝ և փրկեա զիս յերկիւղէ գիշերի և 'ի դիւէ չարէ. որպէս զի զյիշատակ սոսկալի և սուրբ քո անուանդ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ ըղձութեան շնչոյ՝ կեցից պահպանեալ ընդ այնոսիկ, որք կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ ։ Եւ 'ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ՝ զոր աստուածային արեամբ քո ներկեալ նորոգեցեր և 'ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր, և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր. այսու պարգևօք աստ-

ուածականօք՝ ամաչեսցէ սատանայ ․ քակտեսցին մեքենայքն ․ բարձցին որոգայթքն ․ պարտեսցին մարտուցեալքն ․ պակասեսցին զէնքն սայրասուրք ․ մերժեսցի մէգն ․ փարատեսցի խաւարն ․ մեկնեսցի մառախուղն ։ Բազուկ քո հովանասցի և աջ քո կնքեսցէ ։ Վասն զի գթած ես և ողորմած ․ և անուն քո կոչեցեալ է 'ի վերայ ծառայից քոց ։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք , իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից՝ Ամէն ։

Աղօթք վարդապետ Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն ։ Խ Ա ։

Որդի՛ աստուծոյ կենդանւոյ ․ օրհնեալդ յամենայնի ։ Հօրդ ահաւորի անքննելին ծնունդ ․ որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ ։ Որ 'ի ծագել անստուեր՝ նշուլից ողորմութեան քո փառաց ․ հալէին մեղք ․ հալածին դևք ․ ընկէին յանցանք ․ խզին կապանք ․ խորտակին շղթայք ․ կենդանածնին մահացեալք ․ բժշկին հարուածք ։ ողջանան վէրք ․ բառնին ապականութիւնք ․ տեղի տան տխրութիւնք ․ նահանջին հեծութիւնք ․ փախնու խաւարն ․ մեկնի մէգն ․ մերժի մառախուղն ․ փարատի մռայլն ․ սպառի աղջամուղջն ․ վերանայ մութն ․ գնայ գիշերն ․ տարագրի տագնապն ․ չքանան չարիքն ․ հալածին յուսահատութիւնք ։ Եւ թագաւորէ ձեռն քո ․ ամենակալ քաւիչդ ամենայնի՝ որ ոչ եկիր կորուսանել զմարդկան հոգիս , այլ կեցուցանել ․ թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբ քով ։ Զի դու միայն ես յերկնի անճառ , և յերկրի անզննին ․ 'ի տարր գոյից , և յեզր ծագաց աշխարհի ։ Սկիզբն ամենայնի՝ և յամենայնի ․ ամենայնիւ լրմամբ օրհնեալդ 'ի բարձունս ։ Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

ՎԱԽՃԱՆ ։